

Գլուխ 28

«Ազատ պահեստ»

մաքսային ընթացակարգը

Հոդված 211. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի էությունը եւ կիրառումը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների եւ Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան այդպիսի ապրանքները տեղավորվում եւ օգտագործվում են ազատ պահեստում՝ առանց մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու՝ պահպանելով այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման եւ այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները:

2. Ազատ պահեստում կարող են տեղավորվել եւ օգտագործվել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները, ինչպես նաեւ Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքները եւ այլ մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները:

Միության ապրանքները ձեւակերպվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով հայտարարատուի ընտրությամբ:

Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել Միության ապրանքների այն կատեգորիաները, որոնք այդ անդամ պետության տարածքում ստեղծված ազատ պահեստում տեղավորվելու համար պարտադիր կարգով ենթակա են ձեւակերպման «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով:

3. Ազատ պահեստում գտնվող եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձեւակերպված Միության ապրանքների նկատմամբ թույլատրվում է ցանկացած՝ այդ

թվում սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործառնությունների իրականացում:

4. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, իսկ Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

Եթե անդամ պետությունների օրենսդրությամբ թույլատրվում է Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքները տեղավորել եւ օգտագործել ազատ պահեստում, ապա Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից եւ Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից եւ Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները (այսուհետ՝ «ազատ պահեստ» ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ) ստանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ՝ բացառությամբ սույն կետի հինգերորդ պարբերությունում նշված դեպքի:

Այն դեպքում, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից, այդ ապրանքների կարգավիճակը որոշվում է սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան:

Այն դեպքում, երբ ազատ պահեստում գտնվող ապրանքները մաքսային մարմնի կողմից չեն կարող նույնականացվել որպես այնպիսի ապրանքներ, որոնք գտնվել են

ազատ պահեստի տարածքում մինչև դրա ստեղծումը, կամ որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված կամ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, ազատ պահեստի տարածքից Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանման նպատակներով այդպիսի ապրանքները դիտարկվում են որպես Միության ապրանքներ, իսկ այլ նպատակներով՝ որպես Միության մաքսային տարածք ներմուծվող օտարերկրյա ապրանքներ:

Սույն կետի վեցերորդ պարբերությունում նշված՝ նախկինում Միության մաքսային տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելիս այդ ապրանքների նկատմամբ չի կարող կիրառվել «վերաներմուծում» մաքսային ընթացակարգը:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, պետք է նույնականացվեն «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում՝ այդպիսի ապրանքները ազատ պահեստի տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար:

Եթե «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, օգտագործվել են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ պատրաստելու համար, սակայն չեն կարող նույնականացվել այդպիսի ապրանքներում, ապա «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված այդպիսի օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները պետք է արտահանվեն Միության մաքսային տարածքից:

4. Ազատ պահեստի տիրապետողը կարող է ազատ պահեստի տարածքում Միության ապրանքներ տեղավորել եւ (կամ) օգտագործել՝ առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով դրանք ձեւակերպելու՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ եւ երրորդ պարբերությունները:

5. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների եւ (կամ) ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնց նկատմամբ չի կիրառվում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգը:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է սահմանվել այն օտարերկրյա ապրանքների եւ (կամ) օտարերկրյա ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնց նկատմամբ այդ անդամ պետության տարածքում չի կիրառվում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգը:

6. Այն մասերը, հանգույցները, ագրեգատները, որոնք մաքսային մարմնի կողմից կարող են նույնականացվել որպես այնպիսի ապրանքներ, որոնք մտնում են (մտել են) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների կազմի մեջ, ազատ պահեստի տարածքից արտահանման նպատակով դիտարկվում են որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, եւ դրանց նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները:

Հոդված 212. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման եւ այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայման է օտարերկրյա ապրանքների նկատմամբ արգելքների եւ սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. Որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների հայտարարատու՝ կարող է հանդես գալ ազատ պահեստի տիրապետող անձը, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ անձինք:

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների

տեղավորումը եւ գտնվելն ազատ պահեստի տարածքում այդ ազատ պահեստի գործունեության ժամկետի ընթացքում՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ կետը եւ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետը.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների օգտագործումը դրանք այդ մաքսային ընթացակարգով ձեւակերպված հայտարարատուի կողմից կամ սույն գլխին համապատասխան սահմանված այլ անձանց կողմից.

3) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածին համապատասխան գործողությունների կատարումը:

4. Ազատ պահեստի գործունեության դադարեցման դեպքում սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պետք է պահպանվեն մինչեւ այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարեցումը՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

5. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները կարող են տեղավորվել եւ գտնվել մի քանի ազատ պահեստների տարածքներում, որոնց տիրապետողն է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հայտարարատու հանդիսացող իրավաբանական անձը, այդպիսի ապրանքները եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն այդպիսի պահեստների միջեւ տեղափոխելու դեպքերը, ինչպես նաեւ այդպիսի դեպքերում մաքսային գործառնությունների կատարման եւ այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման առանձնահատկությունները:

Հոդված 213. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված)

ապրանքների նկատմամբ իրականացվող գործողությունները

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ազատ պահեստի տարածքում թույլատրվում է հետեւյալ գործողությունների իրականացումը՝

1) պահպանում.

2) ապրանքների բեռնման (բեռնաթափման) գործողություններ եւ պահպանման հետ կապված այլ բեռնային գործողություններ.

3) ապրանքների պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործողություններ, ինչպես նաեւ ապրանքները փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ վաճառքի համար նախապատրաստելու նպատակով սովորաբար իրականացվող գործողություններ՝ ներառյալ խմբաքանակի մասնատումը, առաքումների կազմավորումը, տեսակավորումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը, դրոշմավորումը, ապրանքների որակի բարելավմանն ուղղված գործողությունները.

4) ապրանքների վերամշակման (մշակման), ապրանքների պատրաստման (ներառյալ հավաքումը, կազմազատումը, մոնտաժը, հարմարեցումը), ապրանքների վերանորոգման կամ տեխնիկական սպասարկման գործողություններ, այդ թվում՝ այնպիսիք, որոնք իրականացնելիս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները մասնակցում կամ աջակցում են ապրանքների պատրաստմանը (ստացմանը), եթե նույնիսկ ապրանքների պատրաստման (ստացման) ընթացքում այդ օտարերկրյա ապրանքներն ամբողջությամբ կամ մասնակիորեն ծախսվում (սպառվում) են եւ (կամ) չեն պարունակվում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում (այսուհետ սույն գլխում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ): Տեխնոլոգիական գործընթացում օժանդակ միջոցներ հանդիսացող ապրանքները (օրինակ՝ սարքավորումներ, հաստոցներ, հարմարանքներ) չեն դասվում օտարերկրյա այն ապրանքներին, որոնք մասնակցում

կամ աջակցում են ապրանքների պատրաստմանը (ստացմանը) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելիս.

5) սարքավորումների, մեքենաների եւ ագրեգատների, դրանց պահեստամասերի օգտագործում (շահագործում)՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ, ինչպես նաեւ ազատ պահեստի շահագործման եւ գործունեության հետ կապված այլ գործողություններ իրականացնելու նպատակով.

6) ապրանքների օգտագործում՝ ազատ պահեստի տարածքում արտադրական նշանակության անշարժ գույքի օբյեկտների եւ օժանդակ ենթակառուցվածքի (այսուհետ սույն գլխում՝ անշարժ գույքի օբյեկտներ) կառուցման նպատակով.

7) ապրանքների փորձանմուշների եւ (կամ) նմուշների ընտրություն՝ սույն Օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան.

8) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ՝ ազատ պահեստներ ստեղծելու նպատակներին համապատասխան:

2. Ապրանքների՝ ամբողջությամբ կամ մասնակի սպառման փաստը՝ այդ թվում ապրանքի պատրաստման (ստացման), արտադրական գործընթացների ապահովման, ազատ պահեստի տարածքում օգտագործվող սարքավորումների, մեքենաների եւ ագրեգատների պահպանման եւ շահագործման ընթացքում ծախսման (սպառման) դեպքում, ինչպես նաեւ անշարժ գույքի օբյեկտների կառուցման նպատակով, պետք է արտացոլվի սույն Օրենսգրքի 424-րդ հոդվածի վեցերորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմին ներկայացվող հաշվետվությունում:

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողությունների ցանկը կարող է կրճատվել անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, ազատ պահեստի ստեղծման ժամանակ՝ ելնելով դրա ստեղծման նպատակներից:

4. Սույն հոդվածի 1-ին կետի 1-3-րդ եւ 5-րդ ենթակետերով նախատեսված գործողությունները կարող են իրականացվել միայն ազատ պահեստի տիրապետողի կողմից:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանված լինել սույն կետում նշված գործողությունների կատարման իրավունքն ունեցող այլ անձինք:

5. Մաքսային մարմնի թույլտվությամբ թույլատրվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանում ազատ պահեստի տարածքից՝ առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ հետեւյալ դեպքերում՝

1) սարքավորումներ կամ այլ հիմնական արտադրական միջոցներ հանդիսացող այն ապրանքները, որոնք շահագործման մեջ են դրվել եւ օգտագործվում են ազատ պահեստի տիրապետողի կողմից, կամ նշված հիմնական արտադրական միջոցների մասեր հանդիսացող ապրանքները արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց վերանորոգման (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկման կամ այդպիսի ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահելու համար անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու նպատակով.

2) նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց նկատմամբ տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման, այդ թվում՝ արտադրական գործընթացով նախատեսված գործողություններ իրականացնելու, ինչպես նաեւ որպես նմուշներ ցուցադրելու համար.

3) նշված ապրանքներն արտահանվում են այն անդամ պետության միության մնացած մաս, որի տարածքում ազատ պահեստի տիրապետողը ընդգրկված է ազատ պահեստների տիպապետողների ռեեստրում՝ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններ իրականացնելու

իրավասությունն ունեցող մաքսային մարմնում ազատ պահեստի սահմաններից դուրս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելուն ուղղված մաքսային գործառնություններ իրականացնելու նպատակով:

4) նշված ապրանքներն արտահանվում են այլ ազատ պահեստի տարածքում տեղավորվելու եւ գտնվելու համար՝ սույն Օրենսգրքի 212-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված ապրանքները ենթակա են հետադարձ ներմուծման ազատ պահեստի տարածք մինչեւ մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը՝ ելնելով այդ գործողությունների իրականացման նպատակներից եւ հանգամանքներից: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այդ ապրանքների հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների նկատմամբ պետք է ավարտվի մինչեւ մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այդ ապրանքների հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա:

Սույն հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում նշված ապրանքները պետք է տեղավորվեն այլ ազատ պահեստի տարածքում նախքան մաքսային մարմնի կողմից ժամկետը լրանալը: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այդ ապրանքների հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա:

7. Մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 5-րդ կետում նշված թույլտվության տրամադրման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

8. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) բոլոր

ապրանքների կամ դրանց մի մասի նկատմամբ կարող են իրականացվել գործարքներ, որոնք նախատեսում են այդ ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքի փոխանցում: Ընդ որում, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի սույն Օրենսգրքով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքի:

9. Առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու թույլատրվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների փոխանցումը՝ տիրապետման եւ (կամ) օգտագործման.

կապալառուի (ենթակապալառուի) կամ այլ անձի, որոնք իրականացնելու են շինարարական եւ (կամ) մոնտաժման կապալային աշխատանքներ ազատ պահեստի տարածքում.

փոխադրողի՝ դրանք փոխադրելու համար.

անձանց, որոնք իրականացնելու են վերանորոգում (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկում եւ այդպիսի ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահելու համար անհրաժեշտ այլ գործողություններ.

անձանց, որոնք իրականացնելու են արտադրական գործընթացով նախատեսված՝ այդպիսի ապրանքների տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման գործառնություններ, ինչպես նաեւ դրանց՝ որպես նմուշ ցուցադրությունը.

անձանց, որոնք իրականացնելու են ազատ պահեստի տարածքից արտահանվող ապրանքների նկատմամբ գործառնություններ՝ սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

Ապրանքների՝ սույն կետին համապատասխան փոխանցումը նշված անձանց՝ տիրապետման եւ (կամ) օգտագործման իրավունքով, չի ազատում այդ ապրանքների հայտարարատուին սույն գլխով նախատեսված՝ «ազատ պահեստ» մաքսային

ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելուց:

Հոդված 214. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացումը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները նույնականացնելու նպատակով կարող են կիրառվել հետեւյալ եղանակները՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների վրա ազատ պահեստի տիրապետողի կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից կնիքներ, դրոշմներ դնելը, թվային կամ այլ դրոշմավորում կիրառելը.

2) օտարերկրյա ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

3) օտարերկրյա ապրանքների եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների՝ նախապես վերցված փորձանմուշների, նմուշների համադրում.

4) ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում՝ ներառյալ սերիական համարների ձեւով դրոշմավորումը.

5) այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ իրականացվող վերամշակման գործողությունների բնույթից, այդ թվում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելու տեխնոլոգիական գործընթացում «ազատ պահեստ» մաքսային

ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործման մասին, ինչպես նաև դրանց արտադրության տեխնոլոգիայի մասին մանրամասն տեղեկություններ պարունակող՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողությունների իրականացման ժամանակ մաքսային հսկողության անցկացման միջոցով:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացման իրականացման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 215. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը և դադարեցնելը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի հետևյալ դեպքերում՝

1) ազատ պահեստի գործունեության դադարեցում՝ ազատ պահեստի գործունեության դադարեցման օրվանից 6 ամսվա ընթացքում.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանում ազատ պահեստի տարածքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ապրանքներն արտահանվում են՝

սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետում նշված նպատակներով.

թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացվելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե այդպիսի ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները և դարձել են ոչ պիտանի այն նպատակով օգտագործվելու համար, որի համար

նախատեսված են.

3) հայտարարատուի կողմից «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքների փոխանցումն այլ անձի՝ սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքերում ապրանքների փոխանցման:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս ապրանքների հայտարարատու կարող է լինել այն անձը, որը եղել է ապրանքների հայտարարատուն «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով դրանք ձեւակերպելիս, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ այլ անձ:

3. Ազատ պահեստի գործունեության դադարեցման դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ ազատ պահեստի տարածքում գտնվող՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ձեւակերպելով սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերը՝ բացառությամբ սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված դեպքերի:

Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը լրանալու դեպքում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան չավարտվելու դեպքում այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

4. Ազատ պահեստի տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանելու համար «ազատ պահեստ» մաքսային

ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեռակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա այն ապրանքները, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են անփոփոխ վիճակում՝ բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաեւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից.

«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) եւ սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան որպէս Միության ապրանքներ չճանաչված ապրանքները.

2) «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեռակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքները.

Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները.

«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) եւ սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան Միության ապրանքներ ճանաչված ապրանքները:

5. Ազատ պահեստի տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 14-16-րդ կետերում նշված մաքսային ընթացակարգերով ձեռակերպելով «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա այն ապրանքները, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են անփոփոխ վիճակում՝ բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպէս նաեւ

փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից, եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը.

2) «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված այն ապրանքները, որոնք մնացել են անփոփոխ վիճակում՝ բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաեւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից.

Միության՝ բացառապէս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ Միության ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու դեպքում:

6. Եթէ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կազմի մեջ մտնում են օտարերկրյա ապրանքներ, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցներ, այդպիսի ապրանքներն ազատ պահեստի տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար կարող են ձեւակերպվել սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին եւ 7-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով, այդ ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները նույնականացնելու պայմանով:

7. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է առանց մաքսային ընթացակարգերով ձեւակերպման, սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքում, ինչպես նաեւ հետեւյալ դեպքերում.

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները

Եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները եւ դարձել օգտագործման համար ոչ պիտանի այն նպատակների համար, որոնց համար դրանք նախատեսված են, դուրս են բերվում ազատ պահեստի տարածքից՝ թաղելու, վնասագերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացվելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների այն մասի նկատմամբ, որը համապատասխանում է թաղված, վնասագերծված, ուտիլիզացված եւ (կամ) այլ կերպ ոչնչացված ապրանքների քանակին, եւ սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ոչնչացվել եւ (կամ) անվերադարձ կորսվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով կամ անվերադարձ կորսվել են փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով, եւ այդ ոչնչացման կամ անվերադարձ կորստի փաստը ճանաչվել է մաքսային մարմնի կողմից՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքերում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

9. Ազատ պահեստի գործունեության դադարեցման դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնք ազատ պահեստի տիրապետողի կողմից շահագործման մեջ դրված եւ օգտագործվող՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված սարքավորումներ են եւ (կամ) ազատ պահեստի տիրապետողի կողմից ազատ պահեստի տարածքում անշարժ գույքի օբյեկտներ ստեղծելու համար օգտագործված ապրանքներ են եւ անշարժ գույքի այդպիսի օբյեկտների մաս են կազմում, «ազատ պահեստ» մաքսային

ընթացակարգի գործողությունը ավարտվում է առանց նշված ապրանքները մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու օրվանից:

10. Հայտարարատուի կողմից «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքներն այլ անձի փոխանցվելիս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան:

11. Ազատ պահեստի տիրապետողի լուծարման դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 216. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջանալը եւ դադարելը, դրանց վճարման ժամկետը եւ հաշվարկումը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ հայտարարատուի պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցվելու պահից, իսկ այն ապրանքների մասով, որոնց բացթողման համար հայտագրվել են մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելու ապրանքների բացթողման դիմում ներկայացված անձի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն

առաջանում է ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից:

2. Հայտարարատուի՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետեւյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելը՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածին համապատասխան, այդ թվում՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելը՝ բացառությամբ այն դեպքի, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելով:

2) Միության մաքսային տարածքից սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների արտահանումը:

3) օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձեւակերպում՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում եւ (կամ) սույն հոդվածի 4-րդ կամ 5-րդ կետերին համապատասխան հաշվարկված եւ վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում:

5) մաքսային մարմնի կողմից, մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետության օրենսդրության համաձայն, վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված)

ապրանքների ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի փաստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստի ճանաչում, բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքի համաձայն այդ օտարերկրյա ապրանքների առնչությամբ վրա է հասել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետը.

6) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության մասով, որն առաջացել է ապրանքների հայտարարագիրը կամ մինչեւ ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելիս.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը եւ (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) այն ապրանքներ ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որեւէ մաքսային ընթացակարգով ձեւակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում եւ որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքները եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքները նախքան այդ ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտելը կամ, սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերում, առանց մաքսային մարմնի թույլտվության ազատ պահեստի տարածքից արտահանելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքները կարող են արտահանվել ազատ պահեստի տարածքից առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտելու՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ ազատ պահեստի տարածքից արտահանելու օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ ազատ պահեստի տարածքից այդպիսի արտահանման փաստը բացահայտելու օրը.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքները եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն նախքան այդպիսի ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտելը այլ անձին փոխանցելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքները կարող են փոխանցվել սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 9-րդ կետում նշված դեպքերում՝ ապրանքները փոխանցելու օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդ փոխանցման փաստը բացահայտելու օրը.

3) սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալու օրը՝ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված դեպքերում ազատ պահեստի տարածքից արտահանված ապրանքները մինչեւ սույն

Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը ազատ պահեստի տարածք չվերադարձվելու դեպքում.

4) սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում ազատ պահեստի տարածքից արտահանված ապրանքների մասով՝ մինչև սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգը չավարտվելու դեպքում՝ այդ ժամկետը լրանալու օրը.

5) սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալու օրը՝ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետի ե4-րդ ենթակետում նշված դեպքում ազատ պահեստի տարածքից արտահանված ապրանքները մինչև սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը այլ ազատ պահեստի տարածքում չտեղավորելու դեպքում.

6) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքների եւ (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կորստի դեպքում՝ ապրանքների կորստի օրը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով ապրանքների անվերադարձ կորստի, իսկ եթե այդպիսի օրը պարզված չէ՝ այդպիսի կորստի փաստը բացահայտելու օրը.

7) սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված ապրանքները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ կերպ ոչնչացնելու փաստը հաստատող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված փաստաթղթերը մաքսային մարմին վերջինիս կողմից սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքում՝ այդ

ապրանքներն ազատ պահեստի տարածքի սահմաններից դուրս արտահանելու օրը.

8) սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքի, երբ «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է դադարեցման պահին ազատ պահեստի տարածքում գտնվող այդպիսի ապրանքների նկատմամբ, սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված օրվան հաջորդող օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքների՝ օտարերկրյա ապրանքների առնչությամբ ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդպիսի օտարերկրյա ապրանքները ձեւակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու:

Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, եւ այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն նույնականացվել են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների առնչությամբ այնպես, ինչպես այդպիսի օտարերկրյա ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու:

Սույն կետի առաջին եւ երկրորդ պարբերություններում նշված դեպքերում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերի հիման վրա, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը դրանք «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում իրականացվել է մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

5. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, եւ այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն չեն նույնականացվել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) այդպիսի ապրանքները ձեւակերպվելին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ եւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի 7-րդ եւ 12-րդ գլուխներին համապատասխան՝ էլնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերից, որոնք գործում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը,

հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդ վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման եւ (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերը հաշվարկելու համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որի համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը:

հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկելու համար կիրառվում է այդպիսի խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող

հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի իններորդ պարբերությունը:

Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից եւ (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը եւ (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված եւ (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ եւ 11-րդ գլուխներին ու 76-րդ եւ 77-րդ հոդվածներին համապատասխան:

6. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարներից վճարվում են տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների համար տրամադրված լիներ դրանց վճարումը հետաձգելու հնարավորություն՝ ապրանքներն «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչեւ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը լրանալու օրը:

Նշված տոկոսները հաշվարկվում եւ վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

6. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու կամ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու կամ օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ձեւակերպելու կամ այդ ապրանքները սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցվելու (արգելապահվելու) դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց եւ (կամ) դրանք բռնագանձելուց հետո (ամբողջությամբ կամ մասնակի) սույն հոդվածին համապատասխան վճարված եւ (կամ) բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին եւ 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 217. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկություններն՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն առանձին մաքսային ընթացակարգերով ձեւակերպելիս

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ ազատ պահեստի տարածքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով

ձեռակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, փոխարժեքները, որոնք գործում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեռակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպելիս իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքի:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված, տիրապետողի կողմից շահագործման մեջ դրված եւ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողություններն իրականացնելու համար օգտագործվող սարքավորումները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեռակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, փոխարժեքները, որոնք գործում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեռակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-րդ, 10-րդ եւ 14-րդ կետերում նշված մաքսային ընթացակարգերով ձեռակերպելիս՝

1) նշված ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման պայմանի դեպքում ներմուծման

մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման ժամանակ օգտագործված օտարերկրյա ապրանքների նկատմամբ: Ընդ որում, կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը եւ փոխարժեքները, որոնք գործում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչեւ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման բացակայության դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը եւ փոխարժեքները, որոնք գործում են սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-րդ, 10-րդ եւ 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ: Ադվալորային դրույքաչափով ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման բազան այս դեպքում հանդիսանում է «Ազատ

պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվարկային արժեքը, որի որոշման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու դեպքում, սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, փոխարժեքները, որոնք գործում են սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-րդ, 10-րդ եւ 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ապրանքները ձեւակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

Հոդված 218. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելը

1. Այն դեպքում, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները դուրս են բերվում Միության մաքսային տարածքից, այդ ապրանքների կարգավիճակը որոշվում է ապրանքների բավարար վերամշակման չափանիշներին համապատասխան, ինչը կարող է արտահայտվել՝

1) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագրի փոփոխությամբ՝ առաջին 4 նիշերից ցանկացածի մակարդակով.

2) ապրանքի արժեքի փոփոխությամբ, երբ օգտագործված նյութերի արժեքի

տոկոսային բաժինը կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնում ներառված հաստատագրված չափին (ադվալորային բաժնի կանոն)։

3) անհրաժեշտ պայմանների, արտադրական եւ տեխնոլոգիական այնպիսի գործողությունների իրականացմամբ, որոնք բավարար են ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար։

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ճանաչվում են որպես Միության ապրանքներ, եթե ապրանքների պատրաստման (ստացման) գործողությունների արդյունքում կատարվում է հետեւյալ պայմաններից մեկը՝

1) տեղի է ունեցել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագրի փոփոխություն՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի։

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների արժեքի տոկոսային բաժինը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի մեջ ներառված հաստատագրված չափը, կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնի մեջ հաստատագրված չափին՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի։

3) ապրանքների մասով իրականացվել են այնպիսի պայմաններ, արտադրական եւ տեխնոլոգիական գործողություններ, որոնք բավարար են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ ճանաչելու համար՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դեպքի։

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, անկախ այլ պայմաններ բավարարելու հանգամանքից, չեն ճանաչվում որպես Միության ապրանքներ, եթե այդ ապրանքների մասով իրականացվել են միայն այն գործողությունները, որոնք չեն համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին։

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագրի փոփոխությունը՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով, եւ ադվալորային բաժնի կանոնը չեն կիրառվում որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշներ այն դեպքում, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ սահմանվել է այն պայմանների, արտադրական եւ տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ ճանաչելու համար:

4. Այն պայմանների, արտադրական եւ տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնց համապատասխանելը բավարար է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար, ինչպես նաեւ այն գործողությունների ցանկը, որոնց իրականացումը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելիս չի համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Ադվալորային բաժնի կանոնը, որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշ օգտագործելու կարգ, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ադվալորային բաժնի կանոնը որպես բավարար վերամշակման չափանիշ չի կիրառվում Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերանորոգման գործողություններ իրականացնելիս:

6. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը

սահմանվում է այդպիսի անդամ պետության լիազորված պետական մարմնի կամ կազմակերպության կողմից:

7. Որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթուղթ անդամ պետության լիազորված մարմինը տրամադրում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացություն կամ եզրակացություն այն մասին, որ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ չեն:

Նշված եզրակացությունների ձեւերը, էլեկտրոնային փաստաթղթերի ձեւով ներկայացվող այդ եզրակացությունների կառուցվածքը եւ ձեւաչափը, դրանք լրացնելու, ինչպես նաեւ դրանց տրամադրման եւ կիրառման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

8. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթղթի բացակայության, այն չեղյալ կամ անվավեր ճանաչելու դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս այդ ապրանքները դիտարկվում են որպես Միության ապրանքներ՝ դրանք Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակներով, եւ որպես օտարերկրյա ապրանքներ՝ այլ նպատակներով: